

Բ րիտանոնեայ ԱՅԱՍՏԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՍԻՄԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ
ԼՐԱՏՈՒ

ԱՍՏՎԱԾԱԾՆԶԻ ԴԵՐԸ
ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՆԿԱՐԱԳՐԻ
ՁԵՒԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ,
ԱՂՈԹՔՆԵՐ, ԽՐԱՏՆԵՐ

ՄՈՎՍԵՍ ՏԱԹԵՒԱՅԻ՝
ՄԵԾ ՎԵՐԱՓՈԽԻՉ

ՍՐ. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՐ. ԷՍԻՄԱՆՈՒՄ ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ ԿԱՏԱՐՎԵՑ ԽԱՂՈՂՈՐՀՆԵՐ

Օգոստոսի 15-ին՝ կիրակի, Ս. Աստվածածնի վերափոխման տոնին, Մայր Աթոռ Սր. Էջմիածնում մատուցվեց Սր. Պատարագ: Պատարագին էր կարողիկոսական տեղապահ ամենապատիվ Ս. Ներսես արք. Պողոսյանը:

Հրնարաց Սր. Պատարագի՝ Շարակնոցից բաղկած բնաբանով հավոր պատշաճի բարոգեց եւ տոնի խորհուրդը մեկնեց տեղապահ սրբազանը: Ներսես սրբազանը Վերափոխման տոնին շաղկապեց նաեւ Մայր տաճարի Շողափ կաթի տոնը: Ինչպես հայտնի է, Ս. Էջմիածնի դարավոր տաճարը եւս կոչվում է Սր. Աստվածածնի անունով, եւ Վերափոխման տոնին նախորդում է Սր. Պատարագի ծախման օրը, ճշվում է այս տոնը՝ իբրեւ Մայր տաճարի նավակատի տարեդարձի օր:

Ջույգ տոները միահյուսելով մեկ ընդհանուր գաղափարի՝ մայրության գաղափարի շուրջ՝ տեղապահ սրբազանը ասաց. «Բոլորովին էլ պատահականություն չէ, որ Շողափ կաթի տոնը



նր մայրություն է Աստվածածնի վերափոխման տոնին: Երանաշնորհ մեր հայրապետները իմաստուն մի դասավորությամբ են այս գույգ տոներ գետեղել կողք-կողքի՝ հատուկ նպատակով»:

Հավարտ սրբազան արարողության՝ տեղապահ սրբազանը նախագահեց նաեւ Խաղողօրհներկ ավան-

դական կարգը, որից հետո օրհնված պտուղը բաշխվեց Սր. Պատարագին ներկա բազմաթիվ հավատացյալներին:

Տոնի առիթով Մայր տաճարում կատարվեց նաեւ մատողօրհներկ, եւ բաժանվեց հավատացյալ ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՐ. ԷՍԻՄԱՆՈՒՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Օգոստոսի 11-ին Մայր Աթոռ Սր. Էջմիածնում կարողիկոսական տեղապահ ամենապատիվ Ս. Ներսես արք. Պողոսյանը ընդունեց, այսպես կոչված, «Մշակութային խորհրդարանի» մի խումբ անդամների՝ կազմակերպության նախագահ Արեւշատ Ավագյանի գլխավորությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանի մտավորականության ներկայիս խնդիրների, նրանց հուզող հարցերի շուրջ:

Հյուրերն իրենց մտահոգությունն արտահայտեցին Հայաստանում տարածված աղանդների եւ նրանց ապագային գործունեության վերաբերյալ, հայտնեցին կազմակերպության պատրաստակամությունը Հայաստանյայց Առաքելական Սր. Եկեղեցուն գործակից լինելու հարցում:

Ձրույցի ընթացքում հյուրերը հետաքրքրվեցին նաեւ Ամենայն Հայոց կարողիկոսի առաջիկա ընտրությանը վերաբերող կազմակերպչական մի շարք հարցերով:

Հանդիպմանը ներկա էին Ս. Արսեն արք. Բերբերյանը եւ Ս. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՐ. ԷՍԻՄԱՆՈՒՄ

ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՌԵՆԵՑԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍ Է ԿՐԵԼ ՆԱԵՒ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Օգոստոսի 17-ին կարողիկոսական սեղադաս ամենապատիվ Ս. Ներսես արք. Պողոսյանը, Հայաստանի թեմերի առաջնորդների եւ հոգեւորականների, Մայր Աթոռի դպրոցի տնօրենի եւ ամենապատիվ Ս. Սեդրակ արք. Սարգսյանի հետ միասին խորհուրդում էր հայտնել ամենապատիվ Ս. Սեդրակ արք. Սարգսյանին՝ թուրքիայի հայոց դպրոցի, Իզմիրում եւ Սամսունում սեղի ունեցած ահալոր երկրաբանի առթիվ:

Ի դասական վերոհիշյալ նամակի՝ դասհարմար սրբազանը մանրամասն տեղեկություն էր հաղորդել սեղադաս սրբազանին երկրաբանի դասառնով Պոլսո դասհարմարության կրած վնասների մասին եւ շնորհակալություն հայտնել եղբայրական զորակցության համար:

Այսուհետ ներկայացնում ենք Հայոց կարողիկոսական սեղադասի կողմից՝ ուղղված մեր հավասացյալ ժողովրդին, որդեսգի հնարավոր աջակցությունը ցուցաբերվի 4. Պոլսո դասհարմարությանը:

Ամբողջ աշխարհը արդեն իրագրել դարձավ թուրքիայի արեւմտյան մասում սեղի ունեցած աղետալոր երկրաբանի կյանքի եւ դասառնելիքի մեծ ավերածությունը:

Թուրքիայի հայոց դասհարմար ամենապատիվ Ս. Սեդրակ արք. Սարգսյանի մեզ ղված տեղեկությունը համաձայն՝ նյութական մեծ վնաս է հասել նաեւ Իսամբուլի հայ համայնքի ազգային հաստատություններին:

Վնասվել են դասհարմարների շինքը, իրավաբանաց, մի քանի եկեղեցիներ, դպրոցներ եւ հարակից շինություններ: Համուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ այսու կոչ ենք հղում մեր ողջ հավասացյալ ժողովրդին եւ մեր թեմական ու եկեղեցական իշխանություններին ի Հայաստան եւ ի սփյուռք աշխարհի՝ հորդորելով նրանց իրենց անվերապահ նյութական եւ բարոյական օժանդակությունը հասցնել թուրքիայի մեջ բնակվող մեր դասվական համայնքին:

Բոլոր երկրների մեջ նյութական օգնությունները մեզ է ղվել մեր ազգային առաջնորդարաններին, որոնք այն կիրթանցեն Իսամբուլի հայոց դասհարմարների՝ ամենապատիվ Ս. Սեդրակ արք. Սարգսյանին անունով:

«Երանի ողորմածաց, զի նմա ողորմութիւն գտցեն»:

Հայրական սիրո ազնիվ ու շնորհակալ սրով՝

Ներսես արք. Պողոսյան
կարողիկոսական սեղադաս

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 22-ին կիրակի օրը, լրացավ եղանկահիշատակ Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց կարողիկոսի մահվան 5-րդ տարեկիցը, որի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց Սուրբ եւ Ամենայն Պատարագ (դասարագիչ Ս. Մակար արքեպիսկոպոսի հովանավորությամբ):

Հավարտ Սուրբ Պատարագի՝ հոգեհանգստյան հատուկ դպրոցի հանգու հանգստության համար:

Այս առթիվ մի անգամ եւս հոգեւորականների եւ հավասացյալների կողմից աղոթք բարձրացվեց առ Աստված վասն հոգվո խաղաղության հանգուցյալ Ամենայն Հայոց կարողիկոսի:

«Յիշատակն արդարեւ օրհնութեամբ եղիցի»:

Մամուլ դիվան Մայր Աթոռի

րանիդ, արագաթույշ մտքի ընթացքով հետեւել քոյաշունը Կտակարաններէի անհուն ասպարեզներին: Եւ երբ փորձեն ճաշել խոսքիդ մէկնության մասին, թող մախաժամանի առ ինձ զտեսչութիւն Բո՛ւ իմ ժամանակին խոսքով իմ մէջ արժանին, պիտանին եւ Զեզ հաճելի՛ն՝ ի փառս եւ ի գովեստ Բո Սատովանության եւ ի կատարելալ շինութիւն Կաթողիկէ Եկեղեցու: Կարկառի՛ր ինձ ամենամերձ աջո եւ գորպքով ինձ գրոյթիւմդ շնորհներով, փարսալի՛ր իմ մտքից մոռացության մթին մեզը՝ ցրելով նրա հետ խաժապք մեղրի, որպէսզի խորհուրդներն արթնությամբ այս երկրակող կենցաղից ի վեր բարձրանան: Լուսավորի՛ր վերստին իմ մէջ, ով Հօգր, աստվածաւորության որպշքի ծաղուն՝ անստույգ, որպէսզի արժանի լինեմ ուսանելու եւ ուսուցանելու՝ որպէս թաղի օրինակ աստվածասէր խորհրդանշան: Եւ Զեզ անձնայն փա՛րք ամեն ինչում ամենակալ Հոր եւ միածին, բարեբաւ Որդու հետ այժմ եւ անվախճան հալկիտյաններում, ամեն:

ԷՋԵՐ ՀԱՅ ԵԿԵԼԵՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄՈՎՍԵՍ ՏԱԹԵՒԱՅԻՒՄԵՆ ԿԵՐԱՓՈԽԻՉ

Նախընթաց շրջան

ԺՁ դարում Թուրքիայի եւ Պարսկաստանի տասնամյակներ տևող պատերազմները ծայրագույն բշխառության էին հասցրել Հայաստանը: Բնականաբար, ծանր կացության մի ատմով ենթա Մայր Արոտի վրա ըստոված հարկերն ու կուտակված պարտքերը:

1590 թ. Գրիգոր ԺԲ Կաղարշապատեցուն հաջորդելով, կարողիկոս դարձավ Դավիթ Դ Կաղարշապատեցին (1590-1629): Նա ստեղծված զվարիքի վիճակից դուրս գալու համար արտաքինը ընտրեց Մելիքներ (Մելիքեղեն) Գառնիկուն: Խույս ունենալով, որ պարսկացի իշխանները Մայր Արոտի վրա ըստոված հարկերն ու կուտակված պարտքերը:

Առաջին Դավիթից ելն իր պատմության մեջ մայր գույններով է նկարագրում Դավիթ կարողիկոսության շրջանը: Նա գրում է, որ արտաքին կարողիկոսները «...տառապանքների ճեղքումներին ելն իսկների ծանրությունից անճար լինելով՝ մշտապես հոգեւորի ու մտատանջության մեջ էին... եւ իրենց խորհուրդակցների կամքով հանգում են այսպիսի եզրակացության: այն է, որ մեծարանքի ու սիրո ոգեշնչված իմանակ գրեմ մեծ վարդապետ Սրապիկուն, որ Տիգրանակերտ քաղաքի առաջնորդն էր, որպեսզի գա եւ լծարի պարտքերը»: Պատմիչը շարունակում է հայտնաբերել, որ մասնակցում գրված էր, թե «...սահավակն մեծը մեծ կամքով հետևում ենք կաթողիկոսությունից, երբ պաշտպարները վճարեա, բող ընդ լինի արտոն ու կարողիկոսություն»:

Սրապիկո Ռոսիայեցին, որ ուսույց անձ էր եւ բանիքում վարդապետ, նաեւ հարուստ ժողովրդի որդի, համաձայնեց գալ եւ վանի վրայով հասավ Ջուղա: Շուտով այստեղ եկան նաեւ Դավիթն ու Մելիքները ուղեկից մի բանի նախկույսներով: Այստեղ սկսված բանակցությունները ձախողվեցին, եւ երկու կողմերը բաժանվեցին՝ իբրեւ խղիչները: Դավիթն ու Մելիքները պարտապանների ահից չվերադարձան Մայր Արոտ, այլ գնացին Տաթևի վանք, իսկ Ջուղայի հայերը որոշ ժամանակ անց Սրապիկոն քերին Կաղարշապատ՝ Ս. Էջմիածին, եւ 1603 թ. օգոստոսին «մեծ ժողովով ու բազմամարդ հանգիստով» ձեռնադրեցին կարողիկոս Գրիգոր (ԺԳ) անունով: Սրապիկոն մեծ ներդրում կարող էր ունենալ Մայր Արոտում, երբ յիսներ շախարապան վերադառան:

Մինչ այդ Դավիթն ու Մելիքներն էլ Արոտ վերադարձնելու ուղիներն էին որոնում: Մելիքները գնաց Պարսկաստան եւ Շահ-Աբասին զանգառվեց Սրապիկոն:

Շահաբայան բռնագողթը

Շուտով սկսվեց բուրբ-պարսկական հերթական պատերազմը, որը ողորդական հետեւանքներ ունեցավ հայ ժողովրդի համար: Երբ Շահ-Աբասը հասավ Երևան ու պաշարեց քերը, Սրապիկոն ընձառնով եկավ նրա մոտ, սակայն չափ չընդունեց նրան: Սրապիկոն համար պարզ դարձավ, որ չի կարող մնալ Ս. Էջմիածնում, ուստի Ամիդ վերադառնալու համար նախ եկավ Ջուղա: Այստեղ վրա հասան չափի գործակալները եւ կտուճրեցին երթուղիներով Սրապիկոն իլեկեին ողջ ունեցածը, ստիպեցին, որ պարտքեր վերցնի սեղի հայերից ու տա իրենց: Պարսիկների ձեռքից մի կերպ ազատվելով՝ նա վերադարձավ Ամիդ եւ այնտեղ ապրեց մինչեւ իր կյանքի վերջը (1606):

1604 թ. արշավեց հայ ժողովրդին ու Եկեղեցուն բաժին ընկավ անմախաղեպ մի ողորդություն: Շահ-Աբասը, խուսափելով օսման

նյան բանակի հետ առնակատու-մից, հրամայեց ամաչացնել, անձնադրեցական դարձնել Հայաստանի բոլոր այն վայրերը, որտեղից պիտի անցնեղ օսմանյան բանակը՝ Ժիբակից մինչեւ Գողթն: Շահի հրամանով զանազան գավառներին եւ հիմնականում Արարատյան դաշտավայրից ողջ բնակչությունն ամենաքիչու եղանակով բռնագաղթեցնեց ղեպի Պարսկաստան: Գաղթականների զգալի մասը մահացավ ճանապարհին, շատերն էլ Պարսկաստանում: Հարյուրավոր բնակավայրերի հետ ամաչացան նաեւ բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ: Ծաղկուն Ջուղայի բախանները բնակավայրը լքեցին արգունըն աչքերին՝ Արաքս գետը մեծեցին եկեղեցիների բանակները...

Երեւանի, Ագուլիսի եւ հիմնականում Ջուղայի արհեստավոր եւ վաճառական հայերին շահը բնակեցնեց Արաքսի մոտ, ուր հիմնվեց հայկական Նոր Ջուղա արվարձանը:

Շահաբայան իրեշխար բռնագաղթի հետեւանքով ծանր հարված ստացավ նաեւ կարողիկոսական Արոտը: Գաղթական հայության հետ Պարսկաստան գնաց նաեւ Դավիթ կարողիկոսը: Արոտից Մելիքները կարողացավ վերադառնալ Ս. Էջմիածին: Հարկահաններն այստեղ հանգիստ չէին տալիս նրան, ուստի ստիպված մեկնեց Գ. Պոլիս, բայց մեկ տարի անց վերադարձավ:

Շահ-Աբասը գիտեղ, թե հայ ժողովուրդը որքան սերտորեն է կապված Մայր Արոտի հետ, եւ գաղթեցված հայությանը ընդմիջել պարտքերը երկրին անդադրեցնելու համար որոշեց բանդել Ս. Էջմիածին Մայր տաճարը, բարերը փոխադրել Պարսկաստան եւ Սպահանում: Երբ Էջմիածին կառուցեց: Այս մասին տեղեկանալով՝ Ջուղայի հայ վաճառականները համոզեցին շահին, որ տաճարի փոխադրությունը վաղորդ էլ, բի ջանք կարելու բարերը բավարար են նրա նպատակի իրականացման համար: Այսօրինակ հնարամտությամբ ջուղայեցիները փրկեցին Մայր տաճարը հիմնահատակ ավերումից:

Մայր Արոտի անկայուն վիճակը

Դավիթն ու Մելիքները կարողիկոսները, առաջնության համար մշտական վեճերի մեջ գտնվելով, փոխադարձաբար միմյանց անբաստանեցին շահի ու երկրամասի մեծնեղական տերերի առաջ, եւ երկուսն էլ տարբեր առիթներով հախճանեցին, շորթումներն ու անցանքների ներարկվեցին: Դավիթը հիմնականում բնակվում էր Սպահանում, Մելիքները՝ Երեւանում: Իսկ Էջմիածնի վանքն անտերուն ու անշուրջ վիճակի մեջ էր: Չկարողանալով վճարել չափի կողմից իր վրա դրված հարյուր բունանի հարկը, Մելիքները որոշեց օգուտգործել Մովսես Տաթևացի վարդապետի մեծ եկեղեցականությունը, նրան ձեռնադրելով նախկույս: Նրա հետ մշտնջենական կապեր, բայց ստացած նվերների բավական չէին պարտքերը մարելու համար: Դրանից հետո Մելիքներն առաջադրեց Մովսեսին դառնալ իր արտակալը, բայց մերժում ստանալով՝ իր եղբորորդուն՝ Սահակին, 1623-ին օժեց արտակալի կարողիկոս:

Դրանից հետո Մելիքները, վաճառելով եւ գրավ դեկելով Մայր Արոտի նվիրական սրբություններին ու մատուրներից մի բանքը, մի կերպ վճարեց իսկ պարտքերի որոշ մասը եւ 1624 թ. Էջմիածնից գաղտնագորի հետագալով, գնաց Գ. Պոլիս: Այնտեղ ընդունելության ժամանակաշրջանը մեկնեց Լեւհաստան: Հակառակ Լեւհաստանի հայության կամքի՝ Մելիքները գաղտնա

նի՝ մի գիշեր 150 դուշ կաշառք տանալով, ոմն Նիկոլ Թորոսովիչ արեղայի ձեռնարեց նախկույսու, որն էլ քիչ անց կարողիկոսությունը դնելով՝ դարձավ Լեւհաստանի հայահոծ գաղութի ծովան պատճառը: Մելիքները մահացավ Կաթնեցում 1628 թ.:

Դավիթ կարողիկոսն այդ ժամանակ գտնվում էր Սպահանում: 1629 թ. նա հրաժարվեց կարողիկոսությունից:

Մովսես Տաթևացին եւ Տաթևի մեծ անապատի հիմնումը

ԺԷ դարի առաջին բառորդում Հայաստանն ապրում է համեմատաբար խաղաղ պայմաններում, որը նպաստում է Եկեղեցու վերագաղթներին: Բարեփոխություններին պատասխանաբար ծնում է նաեւ բարեփոխիչներին, որոնցից առաջինը Մովսես վարդապետ Տաթևացին էր: Ծնվել է 1577 թ. Սյունիքի Խառնան գյուղում, կրթությունը ստացել է Տաթևի վանքում, 15 տարեկանում ձեռնադրվել կուսակրոն բաժանա, ապա ուսուցիչ արուեստից: Տիգրանիկոսի Բաթում (Ամիդ) Սրապիկոն Ռոսիայեցու դպրոցում: Սրապիկոն Ս. Էջմիածնի մեկնելուց հետո ուսանում է Գրիգոր Կեսարացու մոտ, որից 1609 թ. 32 տարեկան հասակում տառնում է վարդապետական աստիճան: Նույն թվականին Մովսեսն այցելում է Եգիպտոսի անապատականներին, վաճառակ կյանքի փորձ ձեռք բերում, ապա գնում է Երուսաղեմ, որտեղ Գրիգոր Պարտիկոն պատրիարքի կողմից կարգվում է Ս. Հարություն տաճարի լուսարար:

Երուսաղեմում Մովսես վարդապետը հանդիպում է Սարգիս Նախկույսին, որը Սաղմունքավանքի վանահայրն էր եղել, եւ Կիրաւոս Տրապիզոնցի բախանակին, որոնք որոշել էին Հորդանան գետի մոտ վանք հիմնել: Մովսես Տաթևացին նրանց հորդորում է վերադառնալ հայրենիք եւ այնտեղ հիմնել իրենց երազած վանքը: Հետեւելով այս խորհրդին՝ նրանք վերադառնում են հայրենիք, հաստատվում Սյունիքում եւ 1610 թ. Տաթևի վանքից քիչ հեռու՝ ձորի մեջ, հիմնում են իրենց վանքը, որը հետագայում կոչվեց Սեւ անապատ (Կոչվել է նաեւ Հարանց անապատ): Այստեղ հավաքվեցին բազմաթիվ վաճառականներ, որոնք ընդունեցին Սարգիս Նախկույսի ու Կիրաւոս բախանայի հաստատված վանական կյանքի խիստ կանոնները: Վանքի դպրոցը շուրջ 60 աշակերտ ուներ, որոնց դասավանդում էին Կիրաւոս Տրապիզոնցին, Ներսես Մոկացին, Պողոս Մոկացին, Թուման Տաթևացին, Դավիթ Շամբրեցին:

Մովսես Տաթևացի վարդապետի խորհրդով հիմնադրված Սյունյաց Սեւ անապատը շուտով անվանը համապատասխան մեծ համբավ է ստանում, իսկ նրա դպրոցի ուսույց շրջանակաւորները՝ բարոյազուրյան եւ ուսուցչությամբ են գրաւողում նրկը գաւազակ կողմնորում: Պատահական չէ, որ հայկապետ այս դպրոցի հետ է կապված ԺԷ դարում Ս. Էջմիածնի վերագաղթը:

Մովսես Տաթևացու բարոյազական գործունեությունը

Մովսես Տաթևացին «Պողոս Մոկացի վարդապետները, տեսնելով Հայոց Եկեղեցու անկմանը վիճակը, սկսում են բարոյազական գործունեությամբ զբաղվել փորձելով վերականգնել Եկեղեցու ավանդություններն ու կարգերը: Դրա համար նրանք դպրոցներ էին հիմնում, հավաքում աշակերտություն: Սեւ ձախերի գնով նրանց հաջողվեց բազմաթիվ եկեղեցիներում վերականգնել ավանդական

ժամակարգությունն ու ծեսերը: Ժամանակի կարողիկոս Մելիքներն ու նրա կողակցներին դուր չէր գալիս այս, եւ նրանք հալածում էին Մովսեսին:

Երեւանում եղած ժամանակ Ջաւարիա Զանաբեղեցին Մովսեսին ծանոթացնում է Երեւանի Ամիրգունա խանի հետ՝ ներկայացնելով որպես ազնվագուն եւ ցիտուն անձնավորություն: Ըստ արժանիքի գնահատելով Տաթևացուն՝ խանը նրան առավ իր հովանավորության տակ եւ որպես բնակատեղի՝ հատկացրեց Երեւանի Ամամիա առաքյալ գերեզմանի վրա կառուցված մատուց: Վերանորոգելով այն՝ Մովսես վարդապետն այնտեղ կառուցեց նաեւ բնակեցի տներ եւ հավաքեց միաբանություն: Առանձնապես նշանավոր է այստեղ նրա հիմնած դպրոցը, աճեցրած բանիքային շրջանավարտներով, որոնցից շատերը արդյունավոր գրիկներ ու ծաղկողներ էին: Մովսեսին աջակցեցին նորոգյալեցիները, որ վաղուց գիտեին եւ սիրում էին մկիրայ վարդապետին:

Մովսես Տաթևացին Ս. Էջմիածնում

Պատահական մի դեպքի բերումով Մովսես վարդապետը 1827 թ. դառնում է Ս. Էջմիածնի լուսարար: Շահ-Աբասի կարծիքով պաշտոնյաներից մեկը Երեւանում գտնված ժամանակ Ամիրգունա խանի հետ գալիս է Ամանիա առաքյալի անապատը, ուր Մովսես վարդապետը հյուրերին ընծայում է վանքում պարտատված սպիտակեցված մոմեր: Վերջինս շատ եւ դուր գալիս այդ մոմերը, եւ նա հայտարարում է, որ դրանք, որպես բացառիկ նվեր, կմատուցի չափին: Այդպես էլ լինում է, եւ շաիր, որ շատ է հավանում մոմերը, հրամայում է Մովսես վարդապետին ներկայանալ իրեն ու իր մարդկանց սովորեցնել սպիտակ մոմեր պատրաստելու արվեստը:

Շահի կամքը կատարելուց հետո ջուղայեցիների միջնորդությամբ, որպես վարձատրություն, Մովսես վարդապետը նշանակվում է Ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարար:

Ինչպես վերը նշվեց, Մայր Արոտն այդ ժամանակ շատ ծանր վիճակի մեջ էր գտնվում: Ժամանակակիցները վկայում են, որ բանդելում էր եկեղեցու սպախատակը, լուսանշուտներն առանց փրկելի եւ շրջանակի էին, եւ բոլորներն ապա ելունում էին անուն: Մայր տաճարի գույքն ու ունեցվածքը կորստված էր, իսկ շրջակա շինությունները ավերակի էին վերածվել: Նման պայմաններում Մովսես վարդապետի առաջին գործը եղավ Մայր տաճարի շուրջը կուտակված մի քանի մետր բարձրությամբ արըն ու հողը հեռացնելը, ապա տաճարի շուրջը ուր աշտարակներով պարսպի կառուցումը: 1627-28 թթ. նորոգվեց Մայր տաճարը, կառուցվեցին միաբանների համար կացարաններ, ցմնարան, սննդանոցներ, գործնա մեծարներ եւ այլն: Գրավ դրված եկեղեցական գեներներն ու սրբությունները վերադարձվեցին Մայր Արոտ:

Մովսես Տաթևացին Հայոց կարողիկոս (1629-1632)

Ժողովուրդը, տեսնելով Մովսես Տաթևացու եկեղեցական գործունեությունը, շինարար ոգին, բարոյազական առաքելը, փափագում էր նրան տեսնել Ամանիա Հայոց կարողիկոսական գահին: Երբ Կաթնեցուն մահացավ Մելիքները, նրա եղբորորդի եւ արտակալ Սահակը, որը մերժված էր ժողովրդի կողմից, հեռացել էր Ս. Էջմիածին:

1628 թ. վերջին Մովսես Տաթևա-

ցին մեկնեց Պարսկաստան՝ խնդրաքի ներկայացնելու Շահ-Աբասին Մայր Արոտը 100 բունան հարկից ազատելու համար: Խնդրաքը որպեսզի լուծվեցուց հետո չափի վրա մեծ ազդեցություն ունեցող խոջա Նազարը դիմեց նրան՝ Մովսեսին կարողիկոս հաստատելու համար: Շահ-Աբասը հատուկ հրամանով Մովսեսին հաստատեց Հայոց կարողիկոս: Սակայն Տաթևացին չցանկացավ անտեղի մեր Եկեղեցու պալմոտությունն ու ժողովրդավարական ոգին եւ 1629 թ. հունվարին Ս. Էջմիածնում ժողով կոչվեց, որն էլ նրան ընտրեց կարողիկոս: Ծնունդ տեղի ունեցավ հունվարի 13-ին իսկական խան խառնակառույթն ալանմաներում՝ հոծ բազմության եւ բազմաթիվ եկեղեցականների ներկայությամբ ու մասնակցությամբ:

Մովսես Տաթևացին կարողիկոսական Արոտին բազմեց Հայոց Եկեղեցու համար ամենամանր պայմաններում, սակայն կարողացավ դառնալ նրա վերագաղթների ռաիկոսը: Ժամանակակիցները նրան անվանել են «երկրորդ լուսավորիչ հայոց», իսկ Սիմեոն Երեւանցի կարողիկոսն իր «Ջամբուլ» կոչվող գրքի մեջ Տաթևացուն այսպես է բնութագրել. «Սա էր այդ հոգեւորական, առաքինապարզ եւ բնակարան շնորհաւ ճոզուն Սրբորդ, սիրեցեալ լուստույնը, մարդկանց, որ ի ճաղիկ լուստու տուր, որպէս թէ ճոր ի ճորդ ի հիմանէ նորոգեաց Գուրը Արոտս եւ պայծառացող հոգեւորական կարգօր եւ մարմնակալ պատիւրը»:

Մովսես Տաթևացին ընդամենը երեք տարի կարողիկոսությունը վարեց, բայց այդ ընթացքում իրոք ծաղկեցրեց մեր Եկեղեցին, վերաբացեց եկեղեցիներ, հիմնեց հոգեւոր դպրոցներ, որի շրջանավարտ վարդապետներից շատերը դարձան Եկեղեցու ու մշակույթի ճանաչված գործիչներ: Կարողիկոսի կարգադրությամբ վերականգնվեցին Հայ Եկեղեցու ժամապաշտության ավանդական կարգերը եւ այլն: Նրան հաջողվեց կարգավորել հարաբերությունները պարսկական արքունիքի հետ եւ կայուն վիճակ ապահովել Մայր Արոտի համար:

Մովսես Տաթևացի կարողիկոսը, լինելով Հայ Եկեղեցու միասնականությանը նախանձախնդիր անհատ, ցանկանում էր միացնել Սսի եւ Էջմիածնի Արոտները: Այս նպատակի իրականացման համար նա դիմում է իր ուսուցիչին՝ Գրիգոր Կեսարացուն, որը Գ. Պոլիս աստիճարը էր՝ հայտնելով, որ պատրաստ է անգամ իր Արոտից հրաժարվել, եթե պտոր լինի: Տաթևացու ցանկությունը չիրականացավ, որովհետեւ Գրիգոր Կեսարացի վարդապետը Սսի Արոտի գոյության կողմնակիցներից էր:

Մովսես Տաթևացին լեւհայեցիներն օգնելու համար զրազություններ է ունեցել նաեւ Հռոմի հետ: 1631 թ. ստանալով լեւհայայց խնդրագրի Նիկոլ Թորոսովիչի եւ կարողիկոսների կողմից հայերեն պատմաճան ուսուցանողներին արժանի հիմնական փոխություն հաստատելու մասին՝ նա ցանկանում էր գրում Ուրբանոս Ը պապին եւ Լեւհաստանի Վաղիսլավ Բ-թագավորին:

Մովսես Տաթևացի բազմաբնույթ հայրապետը մահացավ հիւսուհինձր տարեկան հասակում՝ 1632 թվականին, քաղվեց Երեւանում՝ Կոզմոն կղզված բլրի վրա: Նրա լուսարարապետությունը եւ կարողիկոսության կարճ շրջանը (ընդամենը վեց տարի) բավարար եղավ հիմնական փոխություն հաստատելու մասին՝ նա ցանկանում էր դարձնել գոյություն ունեցած ծանր վիճակը եւ Մայր Արոտը դուրս բերելու ղեպի վերելքի ուղի:

ՄԵԼՑ ՍԱՍՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՐՈՏԻ ԳՈՒՅՆԸ

Վաչագան Հովհաննիսյանի հիշատակին

Գարեգին Առաքին Վեհափառ Հայրապետի հուղակավորման օրը մենք միասին էինք: Թեև տկար էիր ու անտառամաղի, բայց եկել էիր Լուսավորչի Աթոռից անժամանակ հեռացած կաթոլիկոսին վերջին հրաժեշտը տալու: Մայրավանքի տարածքը լեկ-լեցուն էր մարդկանցով:

Նորին Սրբությունը աշխարհասփյուռ մեր ժողովրդին հոգևոր գարրերն էր, միասնության սրբազան առաքելությանը ծառայեցին իր ողջ նշանակումը ու ջանքերը, ընդարձակեց եկեղեցաշինությունը, աշխուժացրեց բրիտանական դաստիարակություն ու բարոգորության գործունեությունը: Ընդամենը չորս տարում: Ափսոս, չէ, որ նա դեռ 67 տարեկան էր: Ինչպիսիք գիտելիքներ, ինչպիսիք պատասխատվություններ:

Ափսոսանքի բառերը հորում էին քո շուրթերից: Եւ ընդամենը մի քանի օր հետո ինձ է հասնում քո մահվան բոլոր: Իսկ մենք օգոստոսի 23-ին պիտի մեկնեինք քո 68-րդ տարեդարձը: Հիմա ես ի՞նչ բառերով ավստան քո վաղաժամ կորուստը, եղբայր իմ:

Երկվորյակների մահն 40 տարի շարունակ աղաթ ենք անարաջալար քաղաքում, որտեղ ամեն օր այդ քաղցել է հավատափայտ զանգերի դողալով: Մեր մեջ ամբողջելով սիրո ու ընկերության, բարության ու ազգային ավանդների խորհուրդը:

Նախանձիկ եղավ քո կյանքը, եղբայր: Զեյրիք է վիճակված թեզ մնամ հաստատական ու ճշմարիտ, ազնիվ ու հայրենի ճշակության անսահմանորեն նվիրված լինել: Սատու աշխարհի մոլորակն ու կարողությունը պայծառ եղան քո լույսով, հայրենի թողելու և կրակների, անմարտի ու կրքեր չկանող պատկերները մշտապես եղան քո քանադաժված աշխարհի լուսավոր շնորհներ: Եւ հայ գրականության բանաստեղծական տարածքում սատուները քո մնացած քո անմահ մենաշնորհը:

Լեռներին մեզ բարձրիկ, ճյուղոտ երկրի ցավ կա, երկրի կարոտ:

Եւ երկրի ցավն ու երկրի կարոտը մնացին քո հոգում, քո բոլոր գրքերում ու գրույցներում, հանդիպումների ժամանակ բոլորներում քո էություններում: Բոլոր անհատները խոսքն սկսում էին ավարտվում էր «Յա Մարաթուկ» արտահայտությամբ: Իսկ Մարաթուկ երազի, կարոտի ընթերցանության ու պոեզիաների, ընդլվացման ու հավատի խորհրդանշել էր: Բոլոր գրքերը՝ «Վաղվա համար», «Սրտի գարկեր», «Հավատի գույներ», «Նոր տան առավոտը», «Հողի կանգ», «Իմ անուշ մեքիկ», «Լորդան սիրո ու հավատի», իրենց ջերմ ու անկեղծ սիրով անուշակամությամբ, իրենց անաղարտ ու վարակիչ ուժով ընթերցողների հոգում սփռեցին լույսի հատիկներ, արթնացրին տաք ու հարազատ բոքերներ: Դրա համար էլ քո գրքերի բնագրությունները վեր էին ածվում հոգեկոտ տոնի, հախտուն ու անկեղծ վերաբերմունքի: Սիրված գրողի համընդամենը ջերմ սիրո արտահայտություններ էին նաեւ քո ծննդյան 50 ու 60-ամյակների նվիրված հանդիսավոր արարողությունները, ինչպես եւ հայրենի Ներքին Բազմաբերդ գյուղում, այնպես էլ Էջմիածին քաղաքում: Երբեք չգտնեցիր փառքի ու պարգևների: Մնացի քո ժողովրդի հոգեւոր ու ցավով այդուր բանաստեղծը: Փառքն ու սերն իրենք եկան, որովհետեւ մարդկանց հիացմունք էիր քո շխատությանը, տղա-մարդկային քո ամուր հատկանիշներով: Ինձ ու թեզ ճանաչողների համար ծանր է, շատ է ծանր այնու Էջմիածնի փողոցներում թեզ չունենել: Չտեսնել Մայր Աթոռ տանող ճանապարհին, որտեղ անցավ քո ողջ կյանք: Տասնամյակներ շարունակ Գեորգյան հոգեկոտ ճանապարհում սովորող սաներին դասավանդում էիր մայրենի լեզու ու գրականություն: Դասավանդում էիր յուրովի, բանաստեղծի ու գիմնոլոգի պես: Այստեղ ստեղծ-



ված Հայաստանի աստվածաշնչային ընկերության առաջին աշխատակիցներից մեկը եղար:

Այո, այնպես չեմ տեսնում Սասնա լեռների պատկերն արտահայտող քո վեհաշուր դեմքը, չեմ լսելու հարազատ ու հաստատուն քո ձայնը, սակայն 40 տարվա մեր ընկերության հուշերը, քո բանաստեղծական տաղանդիկ հիշարանը գրքերն ու անմահ շարքերը երբեք չեն խամրի իմ եւ բազմաազգային ընթերցողների հիշողությունների մեջ:

Վախճան չի ունենա երկրի կարոտով լցված քո անսահման հոգին, որը այսուհետեւ ճախրելու է Սասնա լեռների բարձունքներում, կարկաչանոտ ջրերի ու հազարազույյն ծաղիկների հավերժական շշուռքի մեջ: Իսկ մարմինը՝ քո մտերմների ու հարազատների, քո գրող ընկերների, Գեորգյան ճեմարանում սովորող քո սաների բազմությունների վրա տեղափոխվեց քո հայրենի գյուղի հանգստարանը, ուր մեզում են քո անուշ մերկի Գույնը, քո եղբայրիկ Պետիկը: Նրանց հետ մտերմիկ գրույց կանես՝ Արագած լեռան հովիտների, հովիտների հետ համահունչ կզրնգան նաեւ քո պատգամալուստ տողերը: «Մեզանց մի միտք սլակաւեց, մի խիղճ սլակաւեց, ու լույսի մի շերտ, բարությունը խելոճաճ մի բիշ, սլակաւեց ճշմարտախոս մի գիմկոր: Սակայն Սատու աշխարհի կարոտի երգը, մեր ապուրպալների կարոտի գույնը մնաց որպէս օրինակ ու հիշողություն:

Անդրանիկ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԱՂՈՐԹ

ՔԱՆԺԻ

Ա

Աստված բարեկար, հզոր, ահալի ու Հայրը բարի ողորմության շնորհի, Մեծիդ անունով անգամ գործարկ ու ընտանեկան է ավետարանում, քաղցր՝ դժգոհների ու ապերախտների հանդեպ: Բեզ հետ Որդիդ էլ նման է Բեզ, լեռնիդ պէս [Երա] ծնորն է գորեղ՝ անժամանակ տերությանը ահել, Բեզ հետ արարչագործելով փառավորված: Նաեւ Սուր Հոգիդ ճշմարտության, բնեւոր Բեզանց անսպասողներ, որպէս գոյի կատարյալ իսկություն ու մշտնջենավոր էություն, ըստ ամենայնի Բեզ է հավասար ու իշխանությունը փառակից՝ Ողորդ: Եղյակ Անճաղկորություն՝ համակ անբնին, ուրույն զատմամբ առանձնացված դեմքերով, բայց միավորված համագոգությունը, նույնազոյ բնության տիրապետ, անշփոթ ու անմեջբախտ՝ մի կամքով ու կցորդու-

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

բյանը: Ոչ մեկը մյուսից մեծ չէ, ու ոչ էլ մի ակնբարձր՝ մյուսից սկզբ երբեմնից, այլ պատճառ երկնային սիրո անստվեր լույսի հայտնված մեր մեջ, սրբասացության մի պատկեր անսկզբնաբար աստվածաբանված: Քանզի արդարեւ այս վերածայցվալ խոստովանությունը Բո եռափառ դավանության՝ Պետրոսին հավատքի վեճ կոչելու երանության արժանացրեց, իսկ մեղքերով դատապարտվածիս անձը Բո բարեհրաման ակնարկությամբ, ո՛վ [Դու], որ փնտրում ես գերալիս, հրաշանորդ կարողացան: Քանզի քեզում եւ Բոնն են պարզեցնում եւ ողորմությունները, բայց Դու ոչ այնքան Բո պարզեցնելով, որքան ողորմության եւ հոչակված, քանզի երկրորդ Բո փառքն է ավելացնում, իսկ առաջինը ճգնափորների գործերն է հայտնում, զի պարզեցնել փառակեցնելի փոխադրությունն են, իսկ ողորմությունները՝ բարեդարություններ մեղացալիս:

Բ

Եւ արդ, մարդկային գործերը թող չմրցեն Բո շնորհների հետ, Աստված գործարանց, թեեւ ավելի վեր լինեն, քան հասարակաց բնության օրենքների ընթացքը, այլ հաղորդ հանդիսանալով Բո երկայնաժամությունը, երկրածինների ընթացքը նվազ թող լինի Բո առջեւ: Քանզի եւ Երանք, որ օրենքների մարքությունը վատահորեն պարծենում էին, Բո արդարության ներկայն գուշակող լույսը երբ ծագեց, ամենամակալ անձկությանը լքելով արհամարհված հրեությունը, եւ ավելի քան տարազի ողորմելիները՝ մշտապես մարդասիրության կարոտ եղան: Եւ քանզի ամեն ինչ հնարավոր է Բեզ, Բարեբար, լսի՜ր հեծությունների ծայրի պաղատանքները, որ ուղղում են Բեզ, ողորմի՜ր եւ մարդասիրի՜ր: Զի Բոնն են երկայնամտություն, քաղցրություն, փրկություն, քաղցրություն եւ փառք բոլոր հավիտյան ազգերից, ամեն:

ԽՐԱՏԱԽՈՍ

Եթե անունով առաջնորդ եւ կարգված, գործով էլ առաջնորդ եղիր:

Ասրծո երկյուղն ունեցող մարդը սիրոյն ավելի է ազդվում, քան պարծից:

Ով որ ասում է, թե ինքը իրարի կարիք չունի, նրա համար գալազան ավելի լավ է, քան իրարար:

Միավաճ աշակերտի վրա մի բարկանա, որովհետեւ հիվանդն իր կամքով չի հիվանդանում:

Ով պարուն է բարեպաշտին եւ սիրում է անբարիչին, միեւնոյն չարիքն է գործում:

Կրակը մարելու համար ջուր է պէտք, իսկ բարկությունը մարալու համար նախ պէտք է Ասրծո երկյուղը:

Մեք, մեզ իմաստասեր կարծելով, այնպես ենք հպարտանում ու մեծ մեծ խոսում, որ վերնաբան մեզ Սուրբ Հոգու շնորհներն սրացողներն անգամ աշուպահին չէին: Այդ իսկ պարսմառով ուսանելու մեջ ծույլ ենք, իսկ ուսուցանելու մեջ՝ քանահիշ, կարդալու մեջ՝ թույլ եւ իմաստասիրելու մեջ՝ պարսաւարկան:

Ինչպես մարմինն առանց հոգու մեռած է, այնպես էլ մի քաղաք, ուր օրենքն ու արդարությունը բացակայում են, ինչպես՝ կարող է չեն մնալ:

Մեղանն առանց հացի անօգուր է, նույնպես գործությունը՝ առանց իմաստության:

Լավ ցորենը ոչ թե արդի գեղեցկությանն են ընկրում, այլ այնպիսի, որից ընկրի հաց է լինում:

Ասրված, երբ որ բարիք է փալիս, եւ մարդիկ մեծաբանի պարիկը չեն հասկանում ու գոհություն չեն հայրանում, Նա էր է առնում Իր փված բարիքները:

Եթե փառք քան գիտես, մեկն ասա եւ ինք պահիր, խոսքը գոհարի է նման:

ԺԱՄԱՆՆ ԺԱՄԱՆՆ ԺԱՄԱՆՆ ԺԱՄԱՆՆ ԺԱՄԱՆՆ ԺԱՄԱՆՆ ԺԱՄԱՆՆ

Բառազոթան ճիւղ լրացնելով՝ միջնաճողում կկարգաւ Մովսէս Խորենացու ծննդյան շաւականի անվանումը:

1. Արեւմտահայ գրող:
2. Եկեղեցական պաշտամունք, որը կատարվում է մեծ տոնի նախընթաց երեկոյան:
3. Պաշտոն, որը կատարում է ածուն դատարանի վճիռը:
4. Ուղղափառ, ուղղափառ, ...:
5. Թագուհի, իշխանուհի:
6. Միջնորդ դատավոր:
7. Ժամանակի միավոր:
8. Բացված, որը ծառայում է իբրեւ լուսանում:
9. Փոքր մաղ՝ կարծելու համար:
10. Հանգանք:
11. Բազար, որտեղ տեղի ունեցավ 4-րդ դարի Տիեզերական ժողովը:
12. Նախաձեռն:
13. Կույս:
14. Ծառատեսակ:
15. ... եղել, մկարի:
16. Հայ ֆիդայի:
17. Ինչ որ տալիս է հողը:
18. Բերանի խոռոչի վերին մասը:
19. Զար աշուղ արհեստավոր:
20. Հայ գուտան:
21. Խոտ հեծելու գործը:
22. Մերենայի մաս:
23. Ծառատեսակ:
24. Ջրիկողից կամ անձրեւներից առաջացած հողի փլված:
25. «Ինչպես կարող է Ավետարանը» գրքի եղիմանկ:
26. Հրաբխից սկիզբ առնող հեղեղ:
27. Այ. Սպենդարյանի օպերան:
28. Հին Կուսակարգի գրքերից:
29. Երաժշտական գործիք:

Կազմեց Հրաժին ՀԱԼԻՆՅԱՆԸ (Թրքիյի)

1	3		5		11		17		28
			7	8		13	14		21
								20	24 25
					10		16 18		27 29
2			6	9		15			23
	4				12		19	22	26

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրճական, մշակութային, լրագրական երկաթաբարձր

Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Դրասարակիչ՝ Մ. Էջմիածին Բրիտանական դաստիարակության

եւ բարձրության կենտրոն

Գլխավոր խմբագիր՝ Կարեն Մաթեոսյան

Կանցլերական հասցեն՝ Բ. Վաղարշապատ, Մ. Գալանի եկեղեցի,

Բրիտանական դաստիարակության եւ բարձրության կենտրոն

Հեռախոս (8+259) 56780

Արձագրություն կատարելիս հղումը «Բրիտանական Հայաստանին»

դրասարակիչ է:

Նյութերն ընդունվում են մեկնագիր փոխադրում:

ՄԱՐԻ ԹԱՐԻՆ. ԷՋՄԻԱԾԻՆ ՏՊԱՐԱՆ

Ստորագրված է ժողովրդական 26. 08. 1999 թ.

Տղամանակը՝ 2000

Գինը՝ 50 դրամ

ԽՆԴՐԱԿՈՒՄ Է ԹԵՐԻԹԸ ԶՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ԿԱՐԴԱԼՈՒՅ ԴԵՏՈ ԱՅԼ ՏԳԵՔ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ: